**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ արհեստակցական կազմակերպության**

**2012թվականի հաշվետվություն**

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ արհեստակցական կազմակերպությունը, որը ստեղծվել է 2010 թվականին, ունի 307աշխատակից, չհաշված 35հոգի ֆիզարձակուրդում գտնվողներից:

Այս տարի մեր կազմակերպությունը կատարել է հետևյալ աշխատանքները.

Փետրվար ամսին մեր՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում «Լույս հայի աչքերին» ծրագրով անց է կացվել սովորողների տեսողության ստուգում:

2012թվականի ապրիլին «Delta Clinic»բժշկական կենտրոնում իրականացվել է կրթահամալիրի դասավանդողների համար վահանագեղձի և ողնաշարի անվճար հետազոտություն:

«Delta Clinic» բժշկական կենտրոնում ստուգվել են կրթահամալիրի բոլոր դասավանդողները անցան սոնոգրաֆիա, ցանկացողները հետազոտվեցին մակաբույծների հայտնաբերման համար:

Կրթահամալիրի մոտ 100 դասավանդող մասնակցեց հետազոտման և դարձավ Ոսկրածուծի բանկի դոնոր:

Կրթահամալիրում աշխատում է «Ուսուցչի ժպիտ» ստոմատոլոգիական ծրագիրը, որին մասնակցում են բոլոր կարիք ունեցող դասավանդողները:

Ավագ դպրոցի դասավանդողները մասնակցել են VIP GRUP առողջապահության սեմինարին և ցանկացողները դիմել են այդ կազմակերպության բժիշկներին:

Հունիսին կրթահամալիրում անց է կացվել աշխատողների տեսողությանստուգում Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոնի ակնաբուժների կողմից:

Ճարպակալման դեմ պայքարի կենտրոնի ներկայացուցիչները կրթահամալիրի աշխատակիցներին զննեցին և անցկացրեցին կոնսուլտացիաներ առողջ ապրելակերպի վերաբերյալ:

2012թվականի հոկտեմբերին «Delta Clinic»բժշկական կենտրոնում իրականացվեց կրթահամալիրի՝ նախօրոք գրանցված աշխատողների, վահանագեղձի, ողնաշարի և լյարդի անվճար հետազոտություն:

Առողջության վերականգման նպատակով, վիրահատական գործողություններին աջակցել ենք կրթահամալիրի մի խումբ աշխատողների:

Ամռանը կրթահամալիրի աշխատակիցների 30 ընտանիք Ձեր աջակցությամբ մատչելի գներով հանգստացավ Հանքավանի «Խոտորջուր» հանգստյան տանը, որի համար հայտնել և հայտնում ենք մեր շնորհակալությունը:Կարծում եմ հետագայում էլ այն կլինի շարունակական:

Կրթահամալիրի երկու ուսուցիչներ ֆինանսավորվեցին՝ Թուրքիայի Իզմիր քաղաքում ԱՄՆ-ի Նասայի կազմակերպած «Տիեզերք» ճամբարի աշխատանքներին մասնակցելու համար:

Արդեն երրորդ տարին է, որ Վրաստանի կրթության և գիտության աշխատողների անկախ արհմիության հետ, որի նախագահը տիկին Մայա Կոբախիձեն է, փորձի փոխանակման և կրթական միջոցառումների շրջանակում կազմակերպվում են Վրաստան մեկնող ուսումնա-հետազոտական ճամփորդություններ: Մասնակցել ենք Թբիլիսիիում անցկացվող Ռոբոտիքս և Լեոնարդո դա Վինչի միջազգային մրցույթներին և մեր դասավանդողներն ու սովորողները դարրձել են մրցանակակիրներ: Ճամփորդությունները ղեկավարող դասավանդողները ֆինանսավորվել են մեր կազմակերպության կողմից: Նույնը Արցախ մեկնող խմբերի ղեկավարները:

Ուսուցիչների բնակարանային հարցերի կարգավորման համար դիմել ենք հանրապետության նախագահին, վարչապետին և արդյունքում 25 ուսուցիչ ընդգրկվել են Ավան և Զեյթուն թաղամասերում կառուցվող սոցիալական բնակարանների ծրագրում: իսկ մանկավարժների մի ստվախ խումբ սպասում է սոցիալական բնակարանների ծրագիրին

Արհմիության կողմից պարգևատրվել են հանրապետական Դիջիթեք -12 միջազգային ստուգատեսի մրցանակակիր դասավանդողները:

Անց են կացվել տարբեր միջոցառումներ՝ ծննդյան օրեր, Ամանոր, մայրերի և նորածինների տոն, Զատիկ, ատամնահատիկ, գեղեցկության օր և այլն:

Բոլոր աշխատանքների և միջոցառումների արձագանքները տեղադրվել են www.mskh.am կայքում և «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ արհեստակցական կազմակերպության ենթակայքում:

Պարբերաբար հրավիրվել են արհմիության խորհրդի նիստեր և աշխատողների ժողովներ:

Մեր արհեստակցական կազմակերպությունը կապեր է հաստատել Նորվեգիայի աշխատավորական միության հետ՝ համատեղ ծրագրեր իրականացնելու և փորձի փոխանակման նպատակով, փորձում ենք նաև կապեր ստեղծել <<Միջազգային Կրթական>> (Education International) կազմակերպության հետ, որը հանդիսանում է աշխարհի բոլոր կրթական ուսումնական կազմակերպություններն ու անձանց միավորող միջազգային օղակը:

Մասնակցել ենք Հայաստանի Արհմիությունների Կոնֆեդերացիայի 3-րդ համագումարի աշխատանքներին:

Ընթացքում է մեր կանոնադրության վերախմբագրումը՝ այն ավելի գործուն դարձնելու նպատակով:

Մեր կրթահամալիրում ֆիզկուլտուրային և սպորտի մասայականացմանը մեծ տեղ է տրվում: Կրթահամալիրի ղեկավարության անդադրում հետևողականության շնորհիվ վերանորոգվել են մարմնամարզության, թենիսի մարզադահլիճները, բացօթյա ֆուտբոլային դաշտերը, գործում են բաց և փակ լողավազանները:

Խնդիր ունենք Մեծ թենիսի կորտերի կառուցման և շահագործման հարցում և այստեղ ակնկալում ենք մասնագիտական օգնություն:

Ակնկալում ենք նաև Արատեսի ամառային սպորտային ճամբարի համար մարզատեխնիկական գույքի ձեռք բերման աջակցություն:

Շնորհավոր նոր տարի

**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ**

**արհեստակցական կազմակերպության նախագահ՝** **Հասմիկ Նալբանդյան**